

## ԹՈՒՂԹ ՍԱՀԱԿԱՅ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ

ԱՌ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ. ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆԻ

«Նամակագրութիւնք նախնեաց» վերնագիրը կրող գրչագրի մէջ, որ արտագրուած է մեծ մասամբ Յ. եպ. Չահլսաթունեանի գրչութեամբ, և որի մասին յիշատակել էինք «Լուսայ»-ի անցեալ համարում, գտնուում է և Սահակ Արծրունու թուղթը առ Մովսէս Խորենացի և սորա պատասխանի մի մասը: Առաջինը տպուած է էմի-նի «Ընտիր հատուածք» ի և Խորենացու Մատենագրու-թեան 1865 թուի Վենետիկեան հրատարակութեան մէջ: Իսկ երկրորդը միմիայն վերջինիս մէջ ամբողջապէս:

Մեր օրինակը այնպիսի զգալի տարբերութիւններ ունի արդէն տպագրուածներէ, որ մի վայրկեան մարդ մտածում է, թէ մի գուցէ Խորենացու պատմութեան երկու խմբագրութիւն է եղել ժամանակով:

Քանի որ ներկայումս օրուան խնդիր է «Խորենացու պատմութիւնը» և աւելի քան անհրաժեշտ է բոլոր զըր-չագիրների համեմատութեամբ մի ճիշտ օրինակի հրատարակութիւնը, ուստի մենք աւելորդ չհամարեցինք, որ-պէս նիւթ այդ ցանկալի հրատարակութեան համար, տը-պագրել մեր ձեռքին գտնուած յիշեալ ձեռագրի հատուած-ները ինչպէս որ կայ, առանց տպագրուածների հետ հա-մեմատութիւնների, որովհետև գրեթէ անկարելի է այդ անել, այնքան տարբեր են երկուսի ընթերցուածները մի-մեանցից:

Գ. ա. ք. Ա.

Թուղթ Սահակայ Արծրունույ առ Մովսէս Խորենացի.  
յորս եւ քանք Սահակայ Բագրատունեաց իշխանին  
'ի միում տեղւոյ լինելով երկուցն:

Մեծի խորհրդով հրեշտակ և սպասաւոր մեծութեանն  
Քրիստոսի. յերկրի երկնայինդ այլ երկակենցադ, և լու-

սաւորիչ խաւարելոյս, և յետին դարուս եղեալ լոյս ան-  
նուաղ՝ որպէս զաշակերտսն որոց ասացաւ 'ի տեառնէ  
դուք էք լոյս աշխարհի. և մեք կամիմք ցնծալ առ  
ժամանակ մի 'ի լոյս քո՝ որ տուարդ մեզ երկրորդ  
Սահակ և Մեսրոպալ՝ յետ գնալոյ նոցա առ Աստուած:

Վասնորոյ երկրպագութիւն հասցէ 'ի սուրբդ լինէն  
Սահակայ արծրունւոյ:

Զինդրեալ գիրս Բագրատունեաց իշխանիս զգրեալսս  
'ի քէն ընթերցաք. և ուսաք զբնան զուստն նախա-  
րարական ազանցս հայոց. և զմեր նախնեացն գալն  
յայս երկիրս. և յոյժ ուրախացաք շնորհակալութեամբ:

Ընդ որում զերկնայինն հատուցանողն երախտեաց  
տացէ մաքրափայլ անձինդ. և զերկրայինքս մեք որդիքս  
քո տամք քեզ՝ զէնչ կամքէ քոյոյ սրբութեանդ. միայն  
փութա՞ տեսանել զմեզ, աշխատեան և հանգիւր առ որդ-  
ւոցս քոյոց զի օրհնեսցուք 'ի քէն:

Այլ կամիմք ուսանել 'ի քէն զսքանչելագործու-  
թիւն պատկերին՝ որ յանուն Տիրամօրն կալ ի հոգեաց  
վանս՝ թէ ուստի կամ յուժմէ բերեալ եղև լայն տեղի.  
բազում ինչ ալլք՝ ալլապէս պատմեն իրս. որ ոչ են  
նման միմեանց. և ոչ հաւատացաք յուժեքէ զստոյգն  
գտանել. ալլ ընկալեալ եմ 'ի սուրբ ձեռաց քոց գիրս  
առաւել յուսով ընկալայց քան զգիրս Բագրատունեաց  
իշխանիս ի ձեռս իմ. Ո՛ղ լեր 'ի տէր: և մեզ աղօթս  
արան և գալ փութացիր աղաչեմք ևն:

Պատասխանի թղթոյն Սահակայ Արծրունւոյ. յորում  
եւ քանք մարգարէականք. եւ պատմութիւն վասն սուրբ  
պատկերին Տիրամօրն ի Մովսիսէ Խորենացոյ ար-  
տայայտեալ:

Զյորդութիւն առատութեան աստուածային շնոր-  
հաց հոգւոյն որ 'ի վերայ քոյոց անդուլ մտացդ, որ  
վասն գրոյ ծանօթութեան և սիրոյ որ առ Աստուած.  
յառաջ քան զտեսութիւն լուեալ իմ զխոհականութիւն  
մեծի և հզօրի. ծանեան այժմ 'ի ձեռն արժանափայլ

խնդրոյն յառաջ քան զնկարագրութիւնն պատկերիդ: Եւ զտիպ մարմնոյդ տեսեալ զյոժարութիւնն ոգւոյդ՝ գիտացի որ 'ի վերին շնորհացն էր. վասն որոյ և ինքն բանն աստուած 'ի ստեղծանել զմարդն, բանիւ զարդարեաց առ 'ի օրհնել և ճանաչել զերախտագործն. յոր և ասէ՝ օրհնեա՛ն անձն իմ զտէր. և մի մոռանար զգործս նորա:

'Ի յայտոսիկ ուրախ լինի և տէրն և երանէ զայնոսիկ՝ որ յօրէնս տեառն խորհեսցին 'ի տուէ և 'ի գիշերի զի եղիցին որպէս ծառ անթառամ 'ի գնացս ջուրց. որ զպտուղ իւր 'ի ժամու տացէ: Զի թէպէտ և աշխարհս զիւրն սիրէ, սակայն չէ գովելի՝ զի եղծանելի է: Եւ աստուած ստեղծ զմարդն յանմահութիւնն որպէս ասացաւն, այլ ստեղծականաւ կերակրեալ մահացաւ: Վասն որոյ զբանին վառ և պայծառ պահելով զկայծակն, անմահանամք:

Ասացից ի բազմաց զերկուց քերցն զիրսն միայն. և զի երկօքին շերմութեամբ զտէրն ընկալան. մարթայ կերակրելովն՝ այլ գովի Մարիամ. զի ասացաւ յաստուածեղէն բերանոյն՝ եթէ աստ սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մասն բարի ընտրեաց՝ որ ոչ բարձցի ի նմանէ. Յայսցանէ գիտացի լինել զքեզ մեծ իշխանդ Վասպուրականի, որ թէպէտ ի նախարարս ես թուեալ, սակայն ի տանէ թագաւոր իսկ. և ազգաւ ես քաջ և նախնական. և արգասաւոր սերունդ և զարմ. Ո՛չ բանիւ միայն ուռճացեալ, այլ և ի գործ պատերազմաց ընդ առաջինսն ես թուեալ. զի որպէս երկուց մարդոց լինել սուրբ աշխարհս ամենայն հաստատեցան. այսպէս և ի ձեռն երկուց տանցդ արծրունեաց և բազրատունեացդ, այս աշխարհիս սերունդք բնակին և պսակին. և որպէս երկու աչք զբոլոր մարմինս զարդարէ, այսպէս և երկու կողմանքդ արևելից և հիւսիսոյ լուսաւորին ի ձէնջ. Եւ որպէս երկու ձեռք միացեալ ի գործ պիտոյանան, այսպէս և երկիրս հայոց ի ձէնջ գոյանան: Եւ որպէս ի վերայ երկուց ոտից բոլոր մարմինս հաստատի, այսպէս և ի ձեռն երկուց տանցդ ամենայն անգք հայոց հնազանդ լինելով ի մի մարդ կատարեալ լինին ի քրիստոս:

Եւ դուք ևս երկոքին ցեղքդ ընդ միմեանս միացեալ անշարժ կայք:

Ձի քեզ ասեմ իշխանդ արծրունեաց. եցոյց ինձ տէր՝ զի ի յորդուց քոց երեք եղբարք վասն քրիստոսի ի մահ մատնեալք, երկուքն արեամբ վկայք քրիստոսի լինին. և մինն վրիպեալ, և ո՛չ յայսմ վայելէ: Վասնորոյ և աստուած զթագն թագաւորական յորդիս քո դարձուցեալ յերկարաձգեսցէ յերկրի:

Եւ բազբատունւոյդ ասեմ՝ յիշելով զբանն իւր. թագաւորք ի քէն ելցեն, և թագաւորէք ի դուին. և այլ ինչ ասեմ ձեզ՝ յորժամ տայցէ տէր տեսանել:

Այլ ընդ գովասանական բանիցդ շնորհակալ եմ, բայց երկիր ո՛չ պագանեմ, զի զայր ծեր հնացեալ մեղօք հրեշտակի ն՛մանեցուցէք:

Երանի թէ աշակերտ նոցա արժանի լինէի՝ թո՛ղ թէ փոխանորդ, զի հանապազ յիշելով զվարս նոցա հալիմ՝ զի ոչ գտեալ արժանի հոգւոյն. և որ զիմ գաշխատութիւնս արժանի առնէք. յիշել առ հատուցանօղն երկիրպագի. և ձեզ հատուցէ աստուած առատապէս զօրհնութիւնս. այլ չծանրանամ ձեզ աստուածասէր իշխանքքդ յերկրի հոգւով և մտօք միացեալք ընդ իս ի Քրիստոս:

Այլ զխնդիր աստուածասէր իշխանիդ՝ որ վասն պատուական պատկերի Տիրամօրն, որ զարեգակն արդարութեան ի յերկրի ծագեաց ճշմարիտ արևելք եղեալ արեգակն արդարութեան, զի ի նմանէ է փրկութիւն, ի նմանէ է կենդանութիւն, ի նմանէ և քրիստոս ըստ մարմնոյ, որ ի վերայ ամենայնի աստուած:

Որ պատուիրեալ էիք դրան ձերոյ քահանայիդ՝ վասն բեթղեմէմի շինութեանն՝ թէ ո՛վ, յումէ, և զի Ղուկաս զնաթան, և Մատթէոս զՍաղամովն յիշեն նախնիք սուրբ կուսին. զի ոմանք զտիւ և ոմանք զգիշեր երիցացուցանեն:

Գրեմ առ ձեզ՝ այլ ժամս չժամանեմ առ հօր իշխանսդ ի տեսութիւն մինչև կատարեսցի տօնս՝ որ յանուն Տիրամօրն. գրեմ այժմ առ աստուածասէր անձինդ զպատճառս տեղոյն:

Բեթղէեմ տուն հացի թարգմանի, որպէս ասացաւն ի տեառնէ՝ եթէ ես եմ հացն կենաց. և տեղիս հեթանոսաց էր ի նահապետէն զի լիցի հեթանոսաց ճանապարհաւ կենդանութիւնն. զի հեթանոսաց էր երկիրն յորում ծնաւ քրիստոս. և բեթղէեմ տուն էր նահապետացն:

Զի Փարէզ ծնաւ ի յուզայէ և ի Թամարա. սա ծնանի զԵզրովն. և Եզրովն զԱրամ. Արամ զԱմինադաբ, որ սպարապետ Նորուն յուզայի, ի հանելն Մովսիսի զորդիսն իսրայէլի յեգիպտոսէ: Սա ծնանի զՆայասովն՝ որ էր իշխան բիւրաւորացն յուզայ յանապատին: Եւ դուստր Ամինադաբայ եղև կին Եղիազարու որդւոյ Ահարովնի քահանայի. յորմէ ծնան զՓենեհէզ: Իսկ ի յԱմինադաբայ բղխեաց օրհնութիւն թագաւորութեան և քահանայութեան. թագաւորութիւն ի Նայասովնայ. և քահանայութիւնն ի ծննդեանէ քեռն Նայասոնի. ուստի ծնան զՓենեհէզս՝ որ ցածոյց զբարկութիւն Աստուծոյ նախանձախնդիր լինելով:

Եւ Նայասովն ծնանի զՍաղմովն. այս Սաղմովն էր ի ցեղէն յուզայ. զի յորժամ անցոյց յետու ընդ յորդանան զերկոտասան ցեղիցն զբանակսն. և ի կործանմանն Երիքովի ապրեցուցեալ յետու զբախաբ պոռնիկ, և առեալ զնա Սաղմովն իւր ի կնութեան. և քաղաք շինէր ինքեան զբեթղէեմ ի գետինս յուզայ. և ի նմանէ զԲոոս:

Բոոս առեալ կին զՀուութ մովաբացի, և ի նմանէ ծնանէր զՅովբէթ: Ովբէթ ծնանի զՅեսսէ: Յեսսէ ծնանի զԴաւիթ: Սմա և մարգարէին հոգեթառն խոստովանութիւն ասելով՝ ոչինչ կրսեր ես յիշխանս յուզայ:

Իսկ Եփրաթայն՝ թարգմանի բացումն. վասն զի ի սմա երանելին Սամուէլ աստուածային իւզով օծ զԴաւիթ. զոր և մարգարէն նախաճառեալ՝ ի քէն ելցէ ինձ իշխան՝ որ հովուեսցէ զժովովուրդ իմ զիսրայէլ: Մեծի նահապետին լցաւ օրհնութիւնն. անպասացեալ ասէ պետ ի յուզայէ, մինչև ի գալն որոյ իւրն է թագաւորութիւն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց. ոչ վասն Դաւթայ զայս ինչ ճառեալ մարգարէացաւ, այլ

վասն որ ի գաւազէն Դաւթայ ճշմարիտ էառ զմարմնաւորութիւն ի Բեթղէեմ, որ և Դաւթի կոչեցաւն քաղաք: անդ ծնաւ ի սուրբ կուսէն որ առաջին է և ոք կրսեր քաղաք գաւազանին յուգայ. ի նմանէ բացաւ դուռն տիեզերաց տեսութեան՝ զարարչական բանին մարմնանալն:

Ի քէն ելցէ ինձ իշխան՝ ո՛չ ըստ Դաւթայ և կամ ըստ այլ մաքուր թագաւորացն ճառեալ՝ որք միայնում իսրայելի տիրեցին: զի ի բեթղէեմ ի կուսէ ծնիցելոյ, և տիրեալ տիեզերաց աստուածաբար: Եւ զի մի հրէայքն ճոխասցին ինքեանց միայն զմարմնաւորութիւնն հաւատալ. զի և ի հեթանոսաց անմաքուր կանայք՝ զգրտտերացն իսրայելի յաջորդեցին զմաքուրութիւն: Որպէս Բահաբ, Հուրթ, և Թամար. զի և հեթանոսաց պարծեսցի ժողովարանն. այսպիսիս ունելով նախամարս սրբոյ կուսին. զի որպէս և հրէայքն պարծին թագաւորօքն և նահապետօք սրբոյ կուսին նախահարբքն. նրմանապէս և սուրբ եկեղեցի պարծեսցի տեղեաւն և Հուրթաւ, և Թամարաւ, և Բահաբաւ, և զերեւեալ փրկութիւնն նոցա առնելով ընդ թագաւորս և ընդ նահապետս, զմեծ և զառաքինի կանայսն զբեթղէեմ հասարակաբար, զաստուածընկալ այլն հաւասարապէս. զաստղն անջատակի և զմոզսն անորիշ. զմարմնացեալ բանն յերկակողմ մասանց, և յառաքինի կանանց՝ որք ի հեթանոսաց, ի թագաւորաց և ի նահապետաց որք իսրայելէ. և ի սրբոյ կուսէն հասարակաբար փայլեալ անմուտ արեգակնն և ջահաւորեաց զամենայն տիեզերս:

Արդ մի ոք անուսումն զմեզ համարեալ վասն կրկնաբանելոյ զասացեալսս ի մէնջ, այլ վասն աստուածասէր անձինդ գրեմ զբնաւն ի գիրս յայսմ: Վասն այսորիկ և Բոյոս առ կին զՀուրթ մովաբացի, զի նովաւ եղիցի հաղորդ օրհնութեանցն արդարոց. և ի Հուրթայ ծննդենէն ծնաւ ազգ տանն Դաւթի. և ի նոցա գաւազէ ծնաւ արքայ քրիստոս:

Կահատ ծնաւ զԱմրամ, և անուն կնոջն Կահաթու Յովբաբ դուստր Ղևեայ, որ ծնաւ զՍաղա լեզբիպտոս:

և Ոսղա ծնաւ Ամրամայ զԱհարովն, և զՄովսէս և զՄարիամ քոյր սոցա:

Մովսէս ութսուն ամեայ էր և Ահարովն ութսուն և երից. յորժամ խօսեցաւ ընդ Փարաւովնի Եւ Հիպոզիտա բոսորըացի ասէ. առ Ահարովն որդւոյ իւր կին զԵղիսաբէթ զգուստր Ամինադաբայ զքոյր Նասսովնի յազգէ յուդայ. ուստի քահանայութեան և թագաւորութեան ցեղքն ընդ միմեանս խառնակեցան խնամութեամբ: Վասնորոյ և Մարիամ մայր քրիստոսի, թէպէտ և ի յազգէ յուդայ էր. այլ վասն զի խնամութեամբ ընդ միմեանս խառնակեալ քահանայիցն և թագաւորացն կոչի ազգատոհմ Եղիսաբէթի կնոջ Ձաքարիայ. զի և որ ի նմա ծնանելոց էր՝ թագաւոր և քահանայ էր:

Իսկ Ղուկաս աւետարանիչ ո՛չ ըստ բնութեան թուէ զազգահամարն, այլ ըստ օրինացն, զի յորժամ մեռանէր եղբայրն անորդի. իսկ միւս եղբայրն լինքն առնոյր զկիինն և յարուցանէր զաւակ յանուն եղբօրն, և է որ միւսըրեալ է ըստ բնութեանն՝ յորոյ յերանսն գոյր Քրիստոս. և անդէն ո՛չ բաժանէ, այլ թուէ մինչև յԱդամ և յաստուած:

Իսկ Մատթէոս աւետարանիչ թուէ յԱբրահամէ մինչև ցքրիստոս, զի ի նոցա զաւակացն ծնանելոց էր քրիստոս և ըստ նոցա յերանսն գոյր: Եւ զի Մատթէոս զՍաղոմովն ասէ, և Ղուկաս զՆաթան, զի ի Նաթանայ իջանէ ազգն ի Յովսէփ, և ի Սաղոմովնէ իջանէ ի Մարիամ ըստ բանի հրեշտակապետին. Յովսէփ ասէ որդի Դաւթի, մի՛ երկնչիլ առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. զի որ ի նմայն ծնեալ է ի հոգւոյն սրբոյ է:

Ասէ և Եպիփան կիպրացի մեծ վարդապետն այսպէս՝ թէ սուրբ կոյսն Մարիամ աստուածածին դուստր էր Յովակիմայ և Աննայի. իսկ Յովակիմ որդի Բարայ՝ որ կոչի Պանթեռ, եղբայր Մելքեայ, որպէս և կայ յաւանդութենէն հրէից. որդի Ղևեայ ի զաւակէ Նաթանայ՝ և Սաղոմովն որդի Դաւթի ի զաւակէ յուդայ. իսկ Մելքի որդի Ղևեայ, ի վաղճանելն Մատթանայ հօր Յակոբայ, որ և գնաց զհետ մօր իւրոյ առ Մելքի եղբայր Բարայ՝ որ կոչի պանթեռն հայ Յովակիմայ, որ սնաւ ի

տանն Մելքեայ Իսկ ի կնոջէն Մատթանայ ծնաւ երկուս եղբարս. ի Մատթանայ Յակոբ, և ի Մելքեայ Հեղի: և էին Յակոբ և Մելքի եղբարք յալլևալլ հօրէ: Իսկ ի վախճանելն Հեղեայ անգաւակ, հարկեալ Յակոբայ ըստ օրինացն և առնու զկնի եղբօր իւրոյ յարուցանել նմա զաւակ. և այսպէս ծնաւ Յակոբ ի կնոջէն Հեղեայ զՅովսէփ և զԿլէովպատրա:

Ծնունդք ըստ բնութեան Յակոբայ, և որդիք հեղեայ ըստ օրինացն: Իսկ Յովակիմ Հալը Մարիամու, և նորին հայրն Պանթեո, եղբայր Մելքեայ, և էին որդիք Ղևեայ ազգակիցք Յակոբայ որպէս ցուցանեն երայեցւոցն աւանդութիւնք, որպէս

